ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ
ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Խ. Ռ.

Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920) անկումից հետո տարագրության մեջ հաստատված հայ մտավորական-քաղաքական գործիչները քննարկման առարկա դարձրին հայ իրականության մեջ առկա մի շարք հիմնախնդիրներ: Ամենակարևորը, թերևս, Հայկական հարցի վերջնական լուծումն էր, Հայաստանի անկախության վերականգնումը: Սա շատ բնական էր, որովհետև ազգային հարցի, անկախության գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված նրա գործնական լուծումը: Այս առումով բավական ծանրակշիռ մոտեցում է ցուցաբերել մեծանուն հասարակական գործիչ, գրող-հրապարակախոս Լևոն Շանթը (Նահաշպետյան, Մելքոսյան, 1869-1951):

1925 թ. Բոստոնում հրատարակվում է Լևոն Շանթի «Մեր անկախությունը» արժեքավոր աշխատությունը[1], որտեղ հեղինակը բազմակողմանիորեն վերլուծում է Հայաստանի անկախության գաղափարը: Աշխատանքը թեև գրվել է 1922-1923 թթ., այսօր էլ այն չի կորցրել իր այժմեականությունը: Շուրջ հարյուր տարի առաջ ունեցած մտահոգություններն ու կանխատեսումները արդեն իրականություն են դարձել:

Աշխատանքի սկզբում Լևոն Շանթը խոսում է այն մասին, որ անկախության ձգտումը առաջ է բերելու կամքերի ընդհարում, շահերի բախում: Նրա համոզմամբ անկախությունը տարբեր կերպ է շոշափում ազգերի շահերը, որևէ ազգի անկախությունը կարող է բխել տվյալ ազգի ու նաև այլ ազգերի շահերից, սակայն միաժամանակ կարող է աննպաստ համարվել մեկ-երկու այլ ժողովուրդների շահերին: Հետևաբար, յուրաքանչյուր ժողովուրդ փորձելու է խանգարել կամ օժանդակել տվյալ ազգի անկախությանը[2]: Այս առումով նա մատնանշում է, որ սխալ է միջազգային ատյանների վրա հույս դնելով անկախություն ակնկալելը այնքան ժամանակ, մինչև որ «մենք ինքներս որեւէ ուժ ներկայացնենք եւ մեր հարցը դառնայ ուժեղ պետութեան մը հաշիւներուն մէկ մասը, մտնէ լրջօրէն անոր ծրագիրներուն մէջ»[3] (ընդգծ. հեղինակինն է – Ս. Խ.): Այնուհետև հեղինա-կը շարունակում է. «Միջազգային սեղաններուն վրայ մեծ յոյսեր չդնելը խելացիութիւն է անշուշտ, բայց այդ սեղանները արհամարհելն ու բնաւ կարեւորութիւն չտալն ալ կը դառնայ անմտութիւն»[4]: Հայ հրապարակախոսը հասնում է այն ճշմարտությանը, որ միայն մենք պետք է ի զորու լինենք տեր լինելու մեր անկախությանը:

---

[1] **Շանթ Լ.,** *Մեր անկախութիւնը, Պոսթըն, 1925:*
[2] *Նույն տեղում, էջ 9:*
[3] *Նույն տեղում, էջ 17:*
[4] *Նույն տեղում, էջ 18:*

Իսկ անկախությունը ձեռք է բերվում մղված հարատև մաքառումների, գործադրված համառ կամքի և վճռականության շնորհիվ միայն: Իսկ եթե մեզ չհաջողվի ձեռք բերել կամ պահպանել մեր անկախությունը, ապա «իրաւունք չունինք ապրելու իբրեւ ուրոյն ժողովուրդ»[5]:

Անկախության գաղափարը մեկնաբանելիս Շանթը կարևորում է նաև ժամանակի ոգին, այլ կերպ՝ տվյալ պահին տիրող քաղաքական իրավիճակը: Եթե մինչև XX դարի սկիզբը ժողովուրդների իրավունքները հիմնականում որոշում էին բռնակալները, ապա XX դարի սկզբին աստիճանաբար տիրապետող է դառնում ինքնորոշման գաղափարը: Քաղաքակրթության պահանջներից մեկն էլ դառնում է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը: Յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ ինքն է որոշելու իր հետագա ընթացքը, իր պետության բնույթը, կառավարման ձևն ու եղանակը: Սա ենթադրում էր նոր բազմաթիվ պետությունների առաջացում ազգային սկզբունքի հիման վրա, միաժամանակ՝ նաև այդ պետությունների՝ փոխադարձ համաձայնությամբ տարբեր բնույթի դաշնակցություն[6]:

Այսպիսով, Լևոն Շանթն ընդգծում է, որ քաղաքակրթության զարգացման տվյալ մակարդակում ժողովուրդների անկախացման գործընթացն այլևս անկասելի է, իսկ թե ինչպիսին կլինի ժողովրդի անկախության աստիճանը, կորոշի ինքը՝ ժողովուրդը:

Շանթը միաժամանակ գրում է, որ նույն ժամանակի ոգին այլևս չի ընդունում «պան-շարժումները»: Մեր հեղինակն առաջին հերթին նկատի ունի պանթուրքիզմը: Թուրքիան փորձում է, շահարկելով ցեղային նույն ծագումը, իր ազդեցությունը տարածել թյուրքական մյուս ժողովուրդների վրա և ստեղծել կամ վերստեղծել մի ընդարձակ «բռնապետութիւն»: Սակայն այս ծրագրի իրականացմանը խոչընդոտում են ոչ թյուրքական ծագում ունեցող ժողովուրդները, որոնք (հայերը, վրացիներ, պարսիկները, քրդերը) թուրքերի ծրագրմամբ պետք է ոչնչացվեն[7]: Թուրքերի մեծապետական ծրագիրը ենթադրում է ռուս-թուրքական նոր ընդհարում, որը, Շանթի կարծիքով, կարող է ավարտվել պանթուրքիզմի վերջնական ջախջախմամբ:

Հայաստանի անկախության գաղափարի մեջ Շանթը կարևորում է քրիստոնեության դերը: Առանձնապես հետաքրքիր է նրա այն ընդգծումը, որ քրիստոնեությունը հայ ժողովրդի հոգին կտրեց Արևելքից և կապեց Արևմուտքի հետ: Հենց սրանով է պայմանավորվում նաև անկախության համար հայ ժողովրդի դավանած գաղափարախոսությունը: Այս կապակցությամբ Շանթը գրում է. «Ամէն տեղ, բայց մանաւանդ Արեւելքի մէջ, ուր տիրապետութիւնները կրօնապետութիւններ են, կրօնքի դէմ եղած հալածանքը ազգային ուրոյնութեան եւ մասնաւորապէս քաղաքական անկախութեան դէմ մղուած կռիւ է, որով ազգ, կրօն ու անկախութիւն միշտ սերտ կապուած են իրարու, եւ իր

[5] Նույն տեղում, էջ 23:
[6] Նույն տեղում, էջ 54:
[7] Նույն տեղում, էջ 99:

կրօնին փարիլը կը դառնայ զէնք մը, միջոց մը իր ազգային անհատականութիւնը պաշտպանելու, իր պետական ազատութիւնը պահպանելու»[8]:

Համոզմունք հայտնելով, որ միայն քրիստոնեության շնորհիվ է հաջողվել հային պահպանել իր ինքնությունը, և նրա անկախության համար մղած պայքարը համատեղվել է հանուն քրիստոնեության մղած պայքարի հետ, Շանթը գրում է. «Ի՞նչ պիտի մնար հայ ազգութենէն արաբներու եւ մանաւանդ թուրանական ցեղերու այն հեղեղին տակ, որ ողողեց հայ հողը, եթէ Քրիստոնեութեան անջրպետը գոյութիւն չունենար: Կրօնքի նոյնութիւնը պիտի բերէր խառն ամուսնութիւն ու խառն կենցաղ, եւ պիտի առաջանար նոր խառնուրդ մը, ուր հայկականէն կը մնար մօտաւորապէս այնքան, ինչքան որ ուրարտականէն մնացեր է հայկականին մէջ: Հայ ուրոյնութիւնը մեռած կ՚ըլլար վաղուց, դառնալով թուրքի, թաթարի, մոնղոլի, օսմանցիի ու ադրբէյջանցիներու հոգին ու քաղաքակրթութիւնը ազնուացնող տարր մը: Ինչպէս եւ եղած է մասամբ»[9]:

Այսպիսով, Շանթի համոզմամբ, հայ ժողովրդի անկախության համար պայքարը նույնականացվել է քրիստոնեության համար պայքարի հետ, այն եղել պայքար հանուն տեսակի պահպանության:

Շանթը միաժամանակ նշում է, որ նույն քրիստոնեությունը երբեմն ինքն է ընդդիմացել հայ ժողովրդի անկախությանը: Խոսքը վերաբերում է հատկապես Բյուզանդիայի վարած հակահայ քաղաքականությանը:

Անկախության համար պայքարի գործում Շանթը բախտորոշ է համարում հայ ազնվականության կատարած դերը: Վերջինիս մեծագույն մասի ոչնչացումը օտար նվաճողների կողմից, ցավոք, բացասական ազդեցություն է ունեցել: Եվ նա պատահական չի համարում այն հանգամանքը որ վերջին շրջանում հայ անկախական շարժումները դրսևորվել են այն երկրամասերում, ուր պահպանվել են հայ ազնվականական տների մնացորդներ: «Այսինքն՝ մեր հայրենիքի ամենէն բարձր կէտերը՝ Զեյթուն, Սասուն, Ղարաբաղ: Եւ շատ բնական է, որ մեր վերջին դարերու անկախութեան փոքր, յուսահատ, բայց յամառ շարժումները կապուած են եղեր այդ երեք անուններուն»,- գրում է նա[10]:

Շանթի համոզմամբ անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարը արդյունք է նույն ժողովրդի մտավոր վերազարթոնքի: «Այս մտաւորականութիւնը, որ արդիւնք էր եւրոպական գաղափարներուն ու կրթութեան, բնականաբար դաւանելու էր նոյն սկզբունքները, որ ԺԹ-րդ դարու տիրող ըմբռնումներն են եւրոպական կեանքին, գիտութեան եւ իտէալներուն մէջ»,- գրում է նա[11]: Այնուհետև խոսելով հանուն անկախության XIX դ. վերջին և XX դ. սկզբին ծավալված հայ ժողովրդի հեղափոխական պայքարի մասին՝ նա շարունակում է. «Ան, ով կը ցանկայ, որ յեղափոխութիւնը մտած չըլլայ մեր ժողովուրդին գիրկը, պէտք է անիծէ

---

[8] *Նույն տեղում, էջ 113:*

[9] *Նույն տեղում, էջ 114-115:*

[10] *Նույն տեղում, էջ 122:*

[11] *Նույն տեղում, էջ 131:*

ամենէն առաջ մեր դպրոցները, մեր գրագէտները, մեր պատրիարքներն ու ընկերութիւնները, ան պէտք է անիծէ ռուսները, որ մտան Հայաստան, պիտի անիծէ եւրոպացիները, որ եկան Թուրքիա, քիչիկ մը կեանք, շարժում ու քոնթրոլ բերին, բերին գրքեր ու հիմար գաղափարներ»[12]:

Մինչդեռ ժողովուրդը սեփական անկախությունը ձեռք բերելու համար պետք է պատրաստ լինի զոհաբերությունների: «Մինչեւ որ ժողովուրդ մը չի վարժուի անձնազոհութեան, չի ունենար իր ազատութիւնը, մինչեւ որ ժողովուրդ մը չի վարժուի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենար իր պետականութիւնը: Մեր այս վերջին քառասուն-յիսուն տարիներու յեղափոխական շարժումները ոչ միայն յանցանք մը ու մեղադրանք մը չեն հայուն համար, այլ անոր ամենէն մեծ արժանիքը, եւ վերջապես անոր ամենէն մեծ յենարանը, ինչքան ալ որ կոյրերը տեսնել չուզենան»,- գրում է նա[13]:

Այնուհետեւ հայ հրապարակագիրն անդրադառնում է Հայաստանի անկախության գաղափարը քննադատողներին, որոնց նա բաժանում է երկու հիմնական խմբի: Մի խումբը մեղադրում է հայ ժողովրդին իր անկախությանը ձգտելու համար: «Անշուշտ, շատ սակաւ են անոնք, որ քիչ մը խոր ու անվերապահ կերպով թաղուելէն ետքը իրենց հոգիին մէջ, կարողանան ըսել, թէ կը մեղադրեն հայ ժողովուրդը կամ անոր ղեկավար մտաւորականութիւնը, որ անիկա ձրգտած է իր անկախութեան, որ իրենք հակառակ են եղած հայու անկախութեան, որ իրենք հիմա գոնէ կ'ուզեն, որ հայը չի ձգտի այլեւս այդ անկախութեան, եւ կամ կը կարծեն, որ հայը կարող է չի ձգտիլ այդ անկախութեան»,- գրում է նա[14]: Իսկ այդպես մտածողները Շանթի մեկնաբանմամբ առաջարկում են հրաժարվել անկախության ձգտումից և «խորհուրդ կուտան, որ թողնենք այդ յիմար ու ճղճիմ հասկացողութիւնները, պինդ բռնենք զօրաւոր պետութեան մը պոչէն, եւ հանգիստ ուտենք, խմենք, աշխատինք, շահինք ու ապրինք մեզի համար մարդավարի»[15]:

Քննադատների երկրորդ խումբը, արժևորելով ազգային գաղափարը, ազգային անկախությունը, այնուամենայնիվ, համոզված է, որ նույն այդ քաղաքակրթության ու նաև հայ մշակույթի և լեզվի պահպանման համար ժամանակավորապես պետք է հրաժարվել անկախության գաղափարից: «Եթէ թուրքին ճանկէն ազատինք ալ, ռուսին ճանկէն չենք ազատիր՝ ի զուր ջանքեր են, ի զուր եւ վնասակար, աւելորդ տեղը պիտի գրգռենք նաև ռուսները մեզի դէմ, մեր բուրդը պիտի գցեն աշխարհքի չորս հովերուն եւ պիտի կորսնցնենք ամէն ինչ»,- այսպես է ներկայացնում նրանց համոզումը Լևոն Շանթը:

Այս քննադատներին Շանթը պատասխանում է հետևյալ կերպ. «...Առանց ազգային լրիւ գոյութեան, առանց պետական անկախութեան՝ հայ քաղաքակրթութիւն ունենալու գաղափարը անճար ինքնախաբէութիւն մըն է,

---

[12] *Նույն տեղում, էջ 137:*
[13] *Նույն տեղում, էջ 139:*
[14] *Նույն տեղում, էջ 147:*
[15] *Նույն տեղում, էջ 148:*

կամ ծպտուած խաբէութիւն մը, կամ կէս-գիտակից խոստովանութիւն մը, որ ինքը հայ ժողովուրդի օրերը համրուած կը կարծէ»[16]:

Շանթը նշում է, որ անկախության պահանջը որևէ անհատի կամ կազմակերպության հորինած պահանջը չէ: Եթե այսօրվա սերունդը թեկուզ հրաժարվի այդ պահանջից, վաղվա սերունդը կրկին պարզելու է անկախության դրոշը: Եթե ժողովուրդն ապրում է, զրկված լինելով իր անկախությունից, ապա նա, քանի դեռ ապրում է, պետք է ձգտի անկախության[17]: Այլ բան է, որ այդ անկախության ձեռքÿÿÿÿÿÿբեÿÿÿրումը կամ շատ դժվար լինի, կամ անհնարին: Բայց որ ձգտումը լինելու է, դրանում կարելի է չտարակուսել: Ավելին, եթե ժողովուրդը հրաժարվում է անկախության պահանջից, նշանակում է՝ սկսվում է նրա հոգեվարքը:

Անդրադառնալով հայ ժողովրդի օրինակին՝ Շանթը գրում է, որ «ամբողջ հայոց պատմությունը հայ ժողովրդի անկախության պայքարն է»[18] (ընդգծ. հեղինակինն է – Ս. Խ.): Եվ երբ հայը անկախություն չունի, հայ մտավորականությունը միշտ պետք է ծրագրի Հայաստանի անկախությունը[19]:

Այնուհետև Շանթը խոսում է այն մասին, թե Թուրքիան ինչ վերաբերմունք ունի Հայաստանի անկախության նկատմամբ: Թուրքիան Հայաստանի հանդեպ դարերի ընթացքում որդեգրել է թշնամական քաղաքականություն: Թուրքերի հակահայ քաղաքականության հիմքում Շանթը մի քանի հիմնական պատճառ է տեսնում: Առաջինը հայերի քրիստոնյա լինելն է, որը պատրվակ է հանդիսացել ռուսներին արշավելու Հայաստան: Միաժամանակ հայերն էլ սպասումներով ու հույսով են կապվել ռուսների հաջողությանը: Իսկ թուրքերի հակա-հայկականության երկրորդ պատճառ Շանթը համարում է հայերի ան-կախության ձգտումը, որը կարող էր պատճառ դառնալ Թուրքիայի ներքին ցնցումների, ինչպես նաև եվրոպական միջամտության[20]: Հայ-թուրքական թշնամության երրորդ պատճառը Թուրքիայի պանթուրքիստական ծրագրերն են, որոնց իրականացման ճանապարհին ընկած են հայ ժողովուրդը և անկախ Հայաստանը:

Մինչդեռ Հայաստանի և Թուրքիայի ապագա հարևանությունը, իրական խաղաղությունը հնարավոր են միմիայն Հայաստանի անկախ գոյությամբ: Շանթը նշում է, որ անկախություն պետք է ունենան նաև մեր մյուս փոքրիկ հարևանները[21]:

Հայաստանի անկախության համար պայքարը Շանթը բաժանում է մի քանի հավանական աստիճանների՝ վատագույնից դեպի առավել նպաստավորները:

Ամենավատ տարբերակն այն կլինի, եթե ռուսները հարկադրաբար նահանջեն Կովկասից: Թուրքերը կգրավեն այն, հայության գլխին կախված

[16] Նույն տեղում, էջ 151:
[17] Նույն տեղում, էջ 154:
[18] Նույն տեղում, էջ 153:
[19] Նույն տեղում, էջ 155:
[20] Նույն տեղում, էջ 167:
[21] Նույն տեղում, էջ 172:

բնաջնջման վտանգը կդառնա խիստ հավանական: Առավել ընդունելի է այն, որ ռուսները շարունակում են մնալ մեր տարածաշրջանում, և ստատուս քվոյի պահպանումը (նաև հիմա) կհամարվի ընդունելի տարբերակ: Շանթի կարծիքով առավել ընդունելի կլինի, եթե Ռուսաստանը Անգլիային (այսօր թերևս Արևմուտքին – Ս. Խ.) է զիջում Հայաստանը, որը դառնում է համեմատաբար ավելի անկախ և չեզոք պետություն[22]:

Եթե փորձենք հանրագումարի բերել, ապա կարելի է ասել, որ մեր անկախության ուղին Շանթը ուրվագծում է հետևյալ կերպ. ռուսները առայժմ մնում են Կովկասում, հետո նրանց կփոխարինեն Եվրոպան կամ ԱՄՆ-ն, որից հետո Հայաստանը դառնալու է լիարժեք անկախ պետություն:

Անկախության համար պայքարում Շանթը կարևորում է հայ և վրաց ժողովուրդների որդեգրած դիրքորոշումները Թուրքիայի և Ռուսաստանի հանդեպ: Նախ նա փաստում է, որ հայ և վրաց ժողովուրդների անկախությունները փոխադարձ շահեկան են: Եթե կորսվի Հայաստանի անկախությունը, ապա հաջորդը Վրաստանինն է լինելու՝ իր բոլոր ողբերգական հետևանքներով: «Եթէ հայութիւն ջնջուի, հերթը Վրաստանինն է անխուսափելի կերպով՝ Երեւան, Դիլիջան ու Լոռին գրաւողը չի կրնար Թիֆլիզը հանգիստ թողնել, չի կրնար Բաթումէն ձեռք վերցնել, չի կրնար Բաքու-Բաթում գիծը իր ձեռքը չառնել, բացարձակ անկարելիութիւն մըն է թէ տնտեսական, թէ քաղաքական, եւ թէ խլել-տիրելու ախորժակի»,- գրում է Շանթը[23]: Եվ եթե Վրաստանը որևէ անբարյացակամություն ունի Հայաստանի հանդեպ, ապա նման վերաբերմունքն առավել ընդգծված պետք է լինի Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ:

Երկու ժողովուրդների վերաբերմունքը նույնը պետք է լինի նաև Ռուսաստանի հանդեպ: Ռուսաստանն էլ իր հերթին իրերի թելադրանքով նույն վերաբերմունքն է ցույց տալու կովկասյան ժողովուրդներին: Եվ եթե նույնիսկ կողմնակալ քաղաքական նկատառումներով Ռուսաստանը կովկասյան ժողովուրդներից մեկի հանդեպ առավել բարեհամբույր է լինում, ապա դա լոկ ժամանակավոր երևույթ է: «Այնպէս որ՝ կիսանկախ կամ քառորդ անկախ Վրաստանի մը ճանաչումը քայլ մը առաջ ըսել է նաեւ Հայաստանի համար, եթէ նոյնիսկ ենթադրենք, որ այդ քայլը միասին չառինք»,- գրում է Շանթը[24]: Հենց այս տրամաբանության մեջ նա շարունակում է. «Հայկական հարցը, որ այսքան տարի է միջազգային սեղաններուն վրայ կը քաշքշուի, որոշ աստիճանի նաեւ վրացական հարց է»[25]: Շանթի կարծիքով, նույնն է լինելու նաև ռուսներին հավանական փոխարինող անգլիացիների (Արևմուտքի – Ս. Խ.) դեպքում:

Լևոն Շանթն անդրադառնում է նաև Ադրբեջանի և Հայաստանի միջև եղած փոխադարձ անվստահության մթնոլորտին, որը կարող է բացասական

[22] Նույն տեղում, էջ 195-198:
[23] Նույն տեղում, էջ 217:
[24] Նույն տեղում, էջ 219:
[25] Նույն տեղում, էջ 219:

ազդեցություն ունենալ անկախության վրա: Հայ ժողովրդի քրիստոնյա լինելու հանգամանքը ստիպում է Ադրբեջանին վերապահումով մոտենալ Հայաստանին: Իսկ Թուրքիայի առաջխաղացման դեպքում Հայաստանը գրեթե չի բացառում Ադրբեջանի կողմից թիկունքից հարված ստանալը: Ավելին, Ադրբեջանի կողմից հայկական հողերի (Արցախ, Զանգեզուր, Նախիջևան) հանդեպ ունեցած հավակնությունները նախևառաջ թելադրվում և պահանջվում են Թուրքիայի կողմից[26]: Հետևաբար շատ կարևոր է նաև անկախության համար պայքարում հաշվի առնել նաև Ադրբեջանի գործոնը:

Հայաստանի անկախության գաղափարն ի կատար ածելու համար Շանթն առաջարկում է հետևել «կեանքի պահանջին» և կատարել հողի, բնակչության թվի, կամքի, տնտեսական և մտավոր ուժերի կենտրոնացում (ընդգծումը մերն է – Ս. Խ.): Անհրաժեշտ է բոլոր հնարավորությունները ի մի բերել հանուն գոյություն ունեցող փոքրիկ հողակտորի (Խորհրդային Հայաստան, այժմ՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախ, Ջավախք) շենացման, որից հետո համատեղ և կենտրոնացված մտածել հողահավաքի մասին: Միաժամանակ նա գտնում է, որ անկախության ձգտելով կարելի է իրականացնել վերոնշյալ կենտրոնացումները:

Հողի կենտրոնացում ասելով Շանթը նկատի ունի, որ առայժմ հայ ժողովրդի ապագան պետք է կապել այն փոքրիկ հողահատվածի հետ, որի վրա հայ ժողովուրդն ապրում է[27]:

*Բնակչության թվի կենտրոնացումը ենթադրում է հայահավաքի քաղաքականության կիրառում հայրենի հողի վրա: Պետք է ոչ միայն կասեցնել արտագաղթը, այլև անհրաժեշտ է ներգաղթ կազմակերպել: Իսկ ներգաղթի կազմակերպման իրական հնարավորություն Շանթը տեսնում է միայն անկախության պայմաններում**: *Եվ պետք է ընդունել, որ քաղաքագիտական վերլուծություններով առաջնորդվելիս նա ճիշտ է: «Հայ ժողովուրդի թուական կեդրոնացումը հնարաւոր է միայն անկախութեան ժամանակ ու անկախութեան ձգտելով (ընդգծ. հեղինակինն է – Ս. Խ.)»,- պնդում է Շանթը[28]:*

Տնտեսական կենտրոնացում նշանակում է հայկական կապիտալի հաստատում և կենտրոնացում Հայաստանում: Հայկական կապիտալի առկայությունը Հայաստանում տանում է դեպի անկախացում, միաժամանակ անկախացումն իր հետ Հայաստան է բերում հայկական կապիտալը: «Որպէսզի հայ աշխատանքը կեդրոնանայ Հայաստան… ամենէն առաջ «պետք է», որ Հայաստանը ըլլայ անկախ: Գոնէ այնքան անկախ, որ ինքը կարողանայ տնօրինել իր հողային հարցերն ու տնտեսական կարիքները, եւ իր տնտեսական ու վարչական խնդիրներու լուծումը կախուած չըլլայ

---

[26] *Նույն տեղում, էջ 228:*

[27] *Նույն տեղում, էջ 240:*

* *Հանգամանալից վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր օրերում անկախ Հայաստանից բնակչության արտագաղթը փաստում է մեր ոչ լիարժեք անկախ լինելը:*

[28] **Շանթ Լ.,** *նշվ. աշխ., էջ 250:*

Պետրոգրադի ու Մոսկուայի հրահանգներէն ու Թիֆլիզի հրամաններէն»,- գրում է Շանթը[29]:

Անկախության ձգտելով կարելի է հասնել լեզվի, մշակույթի իսկական զարգացման, մտավոր ուժերի իրական կենտրոնացման:

Ամենակարևորը թերևս հայ ժողովրդի կամքի կենտրոնացումն է: Միայն կամքի կենտրոնացումով է հնարավոր ապահովել ժողովրդի թվական աճը, հայրենիքի տնտեսական վերաշինությունն ու հոգևոր, մշակութային զարգացումը: Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է անկախ պետականություն: «Անկախութիւնը հայուն համար կեանքի դրած բացարձակ պահանջն է եւ անկախութեան ձգտումը մեր գոյութեան հիմքը, մեր լինել չլինելու հարցը (ընդգծ. հեղինակինն է – Ս. Խ.)»,- հանրագումարի է բերում իր միտքը Լ. Շանթը[30]:

Անկախության ձգտումը պայմանավորված է ոչ միայն մեր ազգային իղձերն ի կատար ածելու ցանկություններով, այլև հարևանների համանման ձգտմամբ: Շանթի կարծիքով, եթե մենք չփորձենք քայլել նրանց նման, արգելք կդառնանք նրանց համար: Փաստորեն, եթե մենք ծուլանում ենք անկախության համար պայքարում, հարվածում ենք ոչ միայն մեր, այլև անկախության ձգտող մեր հարևանների շահերին:

Շանթը եզրակացնում է, որ եթե մենք «իմաստուններու խորհուրդովը, կռիւէ խուսափելու, հանգիստ մնալու, հարստանալու եւ «բարգաւաճելու» համար հրաժարիլ կ'ուզենք մեր անկախութեան ձգտումէն, պիտի ստիպուինք շարունակ կռուելու, տուժելու ու ցրուելու ճիշդ անոր համար, եթէ տառապիլ, հալածուիլ ու պայքարիլ չուզենանք, պէտք է ստիպուինք տառապելու, հալածուելու, փախչելու ու ջարդուելու ռուսներու տիրապետութեանը գործիք ծառայելու համար, եւ հէնց ռուսները իրենք պիտի սարքեն նորէն հայ-թաթարական ու հայ-վրացական կռուըշտուքն ու ջարդերը»[31]: Մինչդեռ ստորաքարշությամբ և ծառայություններ մատուցելով հնարավոր չէ ակնկալել ռուսների հարգանքն ու բարեկամությունը, որը ձեռք է բերվում սեփական արժանապատվությամբ միայն: Ամեն պահի ռուսները, Շանթի համոզմամբ, կարող են իրենց շահերից ելնելով, մեզ որպես գործիք օգտագործելուց հետո պաշտպանել վրացիների կամ թաթարների (ադրբեջանցիների) շահերը: Իսկ դրա համար մենք պետք է մեղադրենք ոչ թե ռուսներին, այլ մեր սխալ հաշվարկներին և հանցավոր անձնատվությանը: Ուստի օտարի շահերին ծառայող գործիք չլինելու, միմիայն սեփական շահերով առաջնորդվելու համար Շանթի համոզմամբ «մեր բոլոր շարժումներուն, մտածումներուն, ծրագիրներուն, ձեռնարկներուն, պրոպագանտին ու քաղաքականութեան հիմքն ու առանցքը է եւ պէտք է ըլլայ ձգտիլը անկախութեան»[32] (ընդգծ. հեղինակինն է – Ս. Խ.):

---

[29] Նույն տեղում, էջ 259-260:
[30] Նույն տեղում, էջ 275:
[31] Նույն տեղում, էջ 276:
[32] Նույն տեղում, էջ 279:

Այսպիսով, 1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, հայտնվելով տարագրության մեջ, ականավոր գործիչ Լևոն Շանթն իր հրապարակագրության մեջ մեծ տեղ է հատկացնում Հայաստանի անկախության գաղափարին: Բազմակողմանի վերլուծելով այդ գաղափարը՝ նա եզրահանգում է, որ հանուն հայ ժողովրդի հարատևության, Հայաստանի հզորացման և տարածաշրջանային խաղաղության՝ անկախությունը պատմական անհրաժեշտություն է:

ИДЕЯ НЕЗАВИСИМОСТИ
В ИНТЕРПРЕТАЦИИ ЛЕВОНА ШАНТА

СТЕПАНЯН Х. Р.

Резюме

Выдающийся армянский писатель Левон Шант в своей публицистике уделял огромное внимание идее независимости. В работе “Наша независимость”, посвященной анализу этой проблемы, он приходит к заключению, что независимость является исторической необходимостью.

THE IDEA OF INDEPENDENCE
IN LEVON SHANT'S INTERPRETATION

KH. STEPANYAN

Abstract

After Armenia lost its independence in 1920, eminent Armenian figure Levon Shant highlighted the idea of independence in his publications. In his work “Our Independence”, he performed a comprehensive analysis of the idea and arrived at the conclusion that independence is vital from the perspective of history.